

ՄԵՐԳՈ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԵՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Բայական անդեմ նախադասությունները դասական գրաբարում համեմատաբար հազվադեպ հանդիպող միակազմ կառույցներից են և գերազանցապես հանդես են գալիս բարդության կազմում ստորադաս կամ համադաս բաղադրիչ նախադասությունների դերով (Յդ կրօնս Պիթագորաս՝ *զընչատրաց միս չճաշակել՝ և ի գինոյ ժուծկալել՝ /Յզգ., 142/*): Սակավադեպ վկայված են նաև որպես բարդ ստորադասականի գերադաս բաղադրիչներ կամ նախադասություններ՝ անկախ կիրառությամբ (*Մի՛ անկողոթ սոնել շնորհացո, որ ի քեզ են /Կոր., 124/*: *Օտարասէրք լինել ընդ միմեանս առանց տրտնջելոյ /Ա. Պետր. Գ 9/*): Այսպիսի անդեմ նախադասությունները, որոնց գերադաս անդամն անորոշ դերբայն է՝ առանձին կամ իր լրացումների հետ, սովորաբար հրամայական, երբեմն նաև բացականչական կամ հարցական հնչեղանգով արտահայտում են «գործողության կատարման անհրաժեշտություն, կարելիություն, անկարելիություն, պարտադրանք, ցանկություն, կամք, ձգտում և այլն»¹:

Բայական անդեմ նախադասություններն իրենց ոչ միայն իմաստային, այլև ձևային², այդ թվում նաև շարադասական առանձնահատկություններով ավելի մոտ են դիմավոր բայով միակազմ նախադասություններին: Երկուսում էլ, իբրև շարադասական միավոր, պարտադրաբար առկա է բայական բաղադրիչ, որը կարող է հանդես գալ ինչպես մեանակ, այնպես էլ իր խնդրի և պարագա լրացումների հետ: Երկուսում էլ կարող են առկա լինել նաև այլ միավորներ (կոչականներ, ձայնարկություններ, վերաբերականներ, միջանկյալ բառեր և այլն): Այս ամենով հանդերձ՝ բայական անդեմ նախադասությունները շարադասության տեսակետից նաև անատելիորեն առանձնանում են դիմավոր բայով միակազմներից: Դրա հիմնական պատճառն այն է, որ բայական անդեմ կառույցներում գերադաս բայական բաղադրիչը, որի դերում կարող է հանդես գալ միայն անորոշ դերբայը, անհրաժեշտորեն ունի առանձնահատուկ հնչեղանգային ընդգծվածություն: Վերջինս, որ սովորաբար դրսևորվում է հրամանի, կարգադրության, կոչի, հարցման, ցանկության կամ բացականչության ձևով, իրոք անհրաժեշտություն է այնքանով, որքանով նախադասության այս տեսակը ձևավորող միակ գործոնն է և ինքնին քերականական ստորոգումն իրականացնող դեր ունի, այն է՝ առանձին վերցրած անորոշ դերբայը կամ անորոշ դերբայական բառակապակցությունը վերածում է նախադասության: Ավելին, Գ. Խաչատրյանի բնութագրմամբ՝ «հնչեղանգն այս տիպի նախադասությունների մեջ կատարելի գործողության քե-

¹ Տնն Գ. Խաչատրյան, Գրաբարի միակազմ նախադասությունները, Եր., 2002, էջ 175:

² Տնն Վ. Հայրապետյան, Աղոթմ և տեղանական նախադասությունների քերականական կառուցվածքը, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 6, Եր., 1982, էջ 109-120: Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 179-180:

րականական կարգ է մտցնում: Օրինակ՝ *Չխոսել* նշանակում է *Չի կարելի խոսել*³:

Հնչերանգը նաև էապես պայմանավորում է վերոհիշյալ նախադասությունների շարահասությունը: Հնչերանգակիր շարահասական բաղադրիչը սովորաբար ձգտում է զբաղեցնել նախադասության սկիզբը: Հիմնականում դա անորոշ դերբայով արտահայտված գերադաս անդամն է: Հաշվումները միանգամայն պարզորոշ ցույց են տալիս, որ, ի տարբերություն սովորաբար չեզոք հնչերանգով բնութագրվող դիմավոր միակազմ նախադասությունների, որոնցում դիմավոր բայով գերադաս անդամը քիչ թե շատ ամրակայված դիրք չունի, բայական անդամ միակազմ նախադասություններում ակնհայտ իրողություն է հատուկ հնչերանգը կրող գերադաս անդամի՝ անորոշ դերբայի սկզբնային դիրք զբաղեցնելը:

Օր.՝ *Ծանաչել* զիմաստութիւն և զխրատ, *իմանալ* զբանս հանճարոյ: *Ընդունիլ* զդարձուածն բանից, *ի միտ առնուլ* զարդարութիւն ճշմարիտ, և *ուղղել* զիրաւունս /Առակ. Ա. 2-3/: *Միրել* զԱստուածութիւն յամենայն սրտէ և յամենայն անձէ և զօրութեամբ /Ազգաբ., 320/:

Երբ անորոշ դերբայի հետ գերադաս անդամի կազմում հանդես են գալիս *մի՛* արգելականը կամ *ո՛չ* ժխտականը, ապա հնչերանգի ուժն ամբողջությամբ վերցնելով իրենց վրա, դրանք փոքր բացառություններով ամրակայվում են նախադասության սկզբում: Նման դեպքերում անորոշ դերբայը սովորաբար անմիջապես հաջորդում է դրանց, և հատուկ հնչերանգը, թեև համեմատաբար թույլ, բայց տարածվում է նաև նրա վրա. *իմչպես՝ եւ մի՛ ելանել ի մուրոյն տառապանս* /Բուզ., 64/: *Մի՛ անփոյոթ առնել* շնորհացոյ /Կոր., 124/: *Ո՛չ երանել* զբարեբախտութիւն մարդոյ մինչև ի վախճան /ՄԽՊՀ, 125/: *Ո՛չ ուտել* միս և *ո՛չ ըմպել* զգինի /Եզն., 285/: Այսպիսի նախադասություններն ունեն շեշտված հրամայական բնույթ, այստեղ է, որ հրամանը, ինչպես գրում է Վ. Առաքելյանը, առավել կտրուկ ու անառարկելի է⁴:

Մինչդեռ երբ անորոշ դերբայը հետանում է ժխտական մասնիկից, երբեմն նույնիսկ հենումնալով մինչև նախադասության վերջը, ապա այդ դիրքում վերածվում է տրամաբանորեն աննշանակ բաղադրիչի, մանավանդ, երբ նախադասությունը եզրափակվում է վերջադաս դիրքում քիչ հանդիպող կոչականով: Նկատելի է, որ նախորդների համեմատությամբ այսպիսի միակազմ նախադասություններում հրամանի ուժը շատ ավելի թույլ է, և սրանք առավելապես հորդոր կամ խնդրանք են արտահայտում. *Մի՛ իբրև պատրուակ չարութեան ունել* զազատութիւն /Ա. Պետր. Բ 16/: *Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել* /նույն տեղ. Գ 9/: *Մի՛ բազում վարդապետս լինել, եղբա՛րք իմ/ Յակ. Գ 1/5*:

Այսպիսի կատույցներում արգելական մասնիկն ու անորոշ դերբայը կարող են ընդմիջարկվել վերջինիս ինչպես խնդրի, այնպես էլ պարագա լրացումներով՝ *Մի՛ բնաւ ելանել* ըստ իւրաքանչիւր դուրս /Բուզ., 64/: *Մի՛ ինչ առնել* աչառանօք /Ա. Տիմ. Ե 21/: *Մի՛ չար փոխանակ չարի* հատուցանել /Ա. Պետր. Գ 9/: *Մի՛ բազում վարդապետս* լինել, եղբա՛րք իմ /Յակ. Գ 1/ և այլն: Սակավ դեպքերում *մի՛* արգելականը թողնում է նախադասության

³ ՏՆՆ Գ. Խաչատրյան, ԵՎ. աշխ., Էջ 171:

⁴ ՏՆՆ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 2. Եր., 1964, Էջ 40:

⁵ Այդ մասին փն՛ս նաև Մ. Հայրապետյան, Հայուկ հնչերանգով նախադասությունների շարահասական կաղապարները գրաբարում, ԳԱԱ ԵՏՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, Էջ 42:

սկիզբը, որտեղ կարող են հայտնվել տրամաբանորեն ընդգծուն այլ բաղադրիչներ: Այդպիսիք կարող են լինել գերադաս անդամի լրացումները, կոչականը և այլն: Միրելի՞ք, մի՛ օտարօտի համարել գեռանդն ինչ /Ա Պետր. Դ 12/:

Ի դեպ, այսպիսի շարադասական մասնակաղապարով դրսևորվող բայական անդամ նախադասություններն ունեն իրենց սկզբնամասի ոչ միայն բարձր, այլև տևական հնչե-րանգ, որովհետև տրամաբանական շեշտի տակ են ինչպես առաջադաս կոչականը կամ բայական լրացումը, այնպես էլ հաջորդող մի՛ արգելականը: Հնչեքանգն ունի նույնպիսի բնույթ նաև այն դեպքում, երբ առաջադաս խնդրին կամ պարագային հաջորդողը ոչ թե մի՛ արգելականն է, այլ նախադասության գերադաս անդամի գործառույթ ունեցող անորոշ դերբայը. *ի ծառոյն չճաշակել /Ագաթ., 145/*: *Զընչաորաց միս չճաշակել և ի գինոյ ծուծ կալել /Եզն., 142/*:

Հանդիպում է այս մասնակաղապարի ավելի ծավալուն՝ «Լրացում - գերադաս անդամ-լրացում» տարբերակը, որում առկա է նաև գերադաս անդամին հետադասվող՝ նախադասությունը եզրափակող խնդիր կամ պարագա՝ նախադասության ավարտին բնորոշ թույլ արտասանությամբ. ինչպես՝ Մարմնով հանդերձ, ասէ, կրել զբարիս և զչարիս /Եզն., 292/: Միաբան հասանել ի չափ հասակին Բրիստոսի /Կոր., 82/: Սրան հակառակ՝ մեկ այլ ծավալուն տարբերակում («Լրացում - լրացում - գերադաս անդամ») շարադասական մասնակաղապար) նախադասության վերջում հայտնված անորոշ դերբայի բոլոր առաջադաս լրացումները տրամաբանորեն ընդգծված են. Եւ ի լուսնոյ ի վեր զամենայն ...ամմա՛հ համարել /Եզն., 142/:

ՆԱՄԱՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1914:

Բուզ. - Փաստոսի Բիզանդացոյ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912:

Եզն. - Եզնկայ վարդապետի Կողբացոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:

Կոր. - Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:

Միս ՊՀ - Մովսիսի Խորենացոյ Պատմություն Հայոց, Տիֆլիս, 1913:

Ա. Գրքի (Աստուածաշունչ մատենան Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ. Պոլիս, 1895) համառոտագրություններից՝ Առակ. - Առակք Սողոմոնի, Ա. Պետր - Թուրք երանելոյն Պետրոսի առաքելոյ առաջներորդ: Ա. Տիմ. - Թուրք երանելոյն Պողոսի առաքելոյ առ Տիմօթէոս առաջներորդ: Յակ. - Թուրք կաթուղիկեայց երանելոյն Յակօբոյ առաքելոյ: